ԱՐՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 7-ին ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի մեծ խորհրդի նիստում լսել են 2017-2018 ուստարում ֆակուլտետում կատարված աշխատանքների մասին հաշվետվությունը, որը ներկայացրել է դեկան, պ.գ.թ., դոցենտ Արմինե Խաչատրյանը: Նիստին ներկա էին նաև ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, պրոռեկտորներ:

Ֆակուլտետի դեկանը ներկայացրել է հաշվետու տարում իրականացված ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ առանցքային ուղղություններում արձանագրած շոշափելի հաջողությունները, հնչեցրել առկա խնդիրները, նախանշել անելիքները:

«Ֆակուլտետի առաքելությունը և գիտական խնդիրը Արցախի պատմության, մշակույթի ուսումնասիրությունն է, ԱՀ չճանաչվածության պայմաններում քաղաքական, իրավական հիմնախնդիրների լուծմանն ու Արցախյան հիմնահարցի կարգավորման հարցերին նպաստելը: Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է դեկանի, ֆակուլտետի խորհրդի, մեծ խորհրդի կողմից: 2017-2018 ուսումնական տարում ֆակուլտետի խորհրդի կողմից հրավիրվել է 9 նիստ, որտեղ քննարկվել են ընթացիկ ուսումնագիտական հարցերը: Ֆակուլտետում զգալի աշխատանքներ են իրականացրել նաև ուսանողական ինքնավար մարմինները»,-նշել է Արմինե Խաչատրյանը՝ ներկայացնելով նաև ֆակուլտետի դասախոսական և ուսանողական կազմերի կողմից իրականացված գիտահետազոտական աշխատանքների արդյունքները: Խոսելով առկա խնդիրների մասին՝ ֆակուլտետի պատասխանատուն նշել է, որ պատմության ամբիոնում հիմնական խնդիրը հայագիտական ուսումնասիրությունների խորացումն է: Զգալի աշխատանքներ են կատարվել արցախյան գյուղերի պատմության ուսումնասիրության ուղղությամբ, ինչպես նաև թուրք-ադրբեջանական պատմագիտության կեղծաբանումները երևան հանելու, դրանց գիտականորեն հակադարձելու ողղությամբ: Իրավունքի ամբիոնում հետազոտությունների հիմնական ուղղությունը ԱՀ դատական համակարգի, ոլորտում առկա հիմնախնդիրների ուսումնասիրությունն է:

Դեկանը կարևորել է նաև ինքնուրույն,ավարտական աշխատանքների, թեզերի թեմաների ճիշտ և նպատակային ընտրությունը, որի ուսումնասիրությունը նպաստ կբերի հայագիտության ոլորտին: Ֆակուլտետի դասախոսներն ու ուսանողները ոլորտին առնչվող մի շարք հարցեր են ուղղել ԱրՊՀ ռեկտորին, որոնց շուրջ տրվել են սպառիչ պատասխաններ և պարզաբանումներ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Նոյեմբերի 8-ին մանկավարժության և սպորտի ֆակուլտետի 2017-2018 ուսումնական տարվա գործունեության մասին հաշվետվությամբ հանդես է եկել ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանը:

Ներկայացնելով ֆակուլտետի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքները՝ Շ. Այդինյանն ընդգծել է, որ հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են մասնագիտությունների ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի պլանավորման, դասավանդման և գիտելիքների ստուգման գործընթացի բարելավման ուղղություններով:

Ֆակուլտետի կառուցվածքի և կառավարման, կրթական գործունեության կազմակերպման, գիտական, մեթոդական, արտալսարանային, ուսանողների հետ տարվող աշխատանքների, միջբուհական համագործակցության վերաբերյալ հանգամանալից հաշվետվության ընթացքում դեկանը հնչեցրել է նաև թերացումներն ու վրիպումները: Անդրադառնալով կրթական գործունեության կազմակերպմանը՝ Շ. Այդինյանը նկատում է, որ ժամաբաշխման համաչափություն է նկատվում հաստիքային և ժամավճարային աշխատողների հարաբերակցության մեջ. «Ոլորտի առաջատար մասնագետներին ուսումնական գործընթացում ներգրավելը ողջունելի է, սակայն ժամավճարային հիմունքներով վարվող դասաժամերի այսպիսի փորձը չի կարող ապահովել ամբիոնների սահուն սերնդափոխությունը»:

Այս և այլ հարցերի անդրադարձավ նաև ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը: Նա կարևորեց դեկանի կողմից փաստական նյութին զուգահեռ վերլուծության ներկայացումը, ապա պատասխանեց բարձրացված հարցերին: Արձագանքելով դեկանի դասախոսական կազմի սերնդափոխության վերաբերյալ մտահոգություններին՝ ռեկտորը հորդորեց պատասխանատուներին ուշադրության կենտրոնում պահել դասախոսական կազմը երիտասարդ մասնագետներով համալրելու գործընթացը:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զարիհե Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացիր քո համալսարանի մասին:
Այցելիր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 08(213)
Նոյեմբեր, 2018

ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ուսանողներ, ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ՝ Ուսանողների միջազգային օրվա առթիվ: Այսօր առիթ է՝ ևս մեկ անգամ կարևորելու և արժևորելու ուսանողության դերը մեր երկրի կայուն զարգացման և պետականության հիմնայուններն ամրապնդելու գործում: Աշխարհաքաղաքական զարգացումների այս բարդ իրավիճակում երիցս կարևորվում է ազգային արժեհամակարգ ունեցող, հայրենասեր, կիրթ, խելացի ուսանողներ ունենալը, ովքեր երկրի տիրոջ սրտացավություն կունենան հայրենիքի հանդեպ:

Բոլոր ժամանակներում Արցախի մայր բուհի ուսանողությունը եղել է լավագույն գաղափարների կրողն ու կյանքի կոչողը: Արցախի պետական համալսարանը լավագույն մասնագետներ է տվել մեր երկրի բոլոր ոլորտներին, և յուրաքանչյուրը յուրովի իր նպաստն է բերում երկրի շենացմանը: Համոզված եմ, որ դուք, ձեր ուսումնառության ժամանակը արդյունավետ օգտագործելով,կդառնաք լավ մասնագետներ և կլինեք այդ լավագույնների շարունակողը:

ԱրՊՀ որդեգրած ուսանողակենտրոն ուսուցումը միտված է կրթության որակի բարձրացմանն ու ժամանակակից աշխարհի պահանջներին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստմանը, ուսանողին անհատական օժանդակություն ցուցաբերելուն, որը կարևորում եմ կրթական առաքելության գործում: Ուսանողը պետք է լինի դասախոսի կրտսեր գործընկերը, և համալսարանական ցանկացած որոշում ընդունելիս հաշվի առնվի նաև ուսանողության կարծիքը:

Սիրելի՛ ուսանողներ, մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիդ և հորդորում, որ ուսումնառության տարիների ամեն մի օրն օգտագործեք ի շահ ձեր մտավոր ներուժի ու կարողությունների զարգացման: Մաղթում եմ խաղաղություն, անձնական ու համազգային իղձերի իրականացում և հաջողություններ:

ԱՀ ՊԵՏՆԱԽԱՐԱՐ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱրՊՀ ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

Հաշվի առնելով ուսանողության առաջարկը՝ ԱրՊՀ դեկավարության նախաձեռնությամբ Արցախի Հանրապետության պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանը նոյեմբերի 16-ին Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ ընդունել է ԱրՊՀ մի խումբ ուսանողների:

Հանդիպմանը ներկա էին նաև ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ԱրՊՀ դեկավարությունը: Գրիգորի Մարտիրոսյանը, շնորհավորելով ուսանողներին գալիք տոնի առթիվ, կարևորել է ուսանողության դերը երկրի զարգացման բոլոր ոլորտներում և մաղթել նրանց ուսումնական հաջողություններ:

➥ 3

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԶՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Նոյեմբերի 14-ին Բեյրութի Հայկազյան համալսարանի պատվիրակությունը, համալսարանի նախագահ, դոկտոր Փոլ Հայտոսյանի գլխավորությամբ, այցելել է Արցախի պետական համալսարան: Այցի ընթացքում Արցախի պետական համալսարանի և Բեյրութի Հայկազյան համալսարանի միջև կնքվել է համագործակցության հուշագիր և տեղի ունեցել Հայկազյան Հայագիտական հանդեսի 38-րդ համարի շնորհանդեսը:

Ողջունելով հյուրերին՝ ռեկտոր Արմեն Սարգսյանը նշել է, որ Հայկազյան համալսարանը ստեղծման օրից իրականացնում է հայապահպանության գործընթացը խթանելու առաքելություն ոչ միայն Լիբանանում, այլև ողջ Ասիայում: Կարևորելով համալսարանի կողմից տպագրվող Հայկազյան Հայագիտական հանդեսը՝ որպես Սփյուռքում հրատարակվող միակ հայատառ գիտական տարեգիրք, նա նշել է, որ հանդեսի տարբեր համարներում տպագրվել են նաև ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի հոդվածները:

«Երկու համալսարանների համագործակցությունը տարիների պատմություն ունի, և վաղուց ժամանակն էր այն տեղափոխել պաշտոնական հարթություն: ԱրՊՀ և Հայկազյան համալսարանի միջև ստորագրված հուշագրով նախատեսվում է համատեղ գիտակրթական միջոցառումների կազմակերպում, գիտահետազոտական նախագծերի իրականացում, ուսանողների և դասախոսների փոխանակում, ուսումնամեթոդական օժանդակության տրամադրում, փոխայցելություններ»,- արժևորելով երկու համալսարանների միջև կնքված համագործակցության հուշագիրը՝ նշել է ԱրՊՀ ռեկտորը:

Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ Փոլ Հայտոսյանը, խոսելով Հայկազյան համալսարանի գործունեության մասին, նշել է, որ այն չի կարող չեզոք լինել ինքնության պահպանման հարցում, որի ապացույցը նաև ստորագրվող համաձայնագիրն է. «Արցախի պետական համալսարանի հետ նախատեսում ենք համագործակցել միասնաբար՝ իրական աշխատանք իրականացնելու պայմանով, որը պիտի շոշափելի պտուղներ տա»:

ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանն ու ՄԵՀՋ նախարար Լեռնիկ Հովհաննիսյանը ևս հատկանշել են Հայկազյան համալսարանի և գիտական պարբերականի անուրանալի ավանդը Սփյուռքում հայապահպանության գործում:

ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանն իր խոսքում հույս է հայտնել, որ հանդիպումը սկիզբ կդառնա երկու համալսարանների համագործակցության սերտացման: «Անուրանալի է Հայկազյանի դերն ու նշանակությունը հայ ինքնության պահպանման և հայագիտության զարգացման հարցում: Հայկազյանը ստեղծվել է հայոց ցեղասպանությունից 40 տարի անց: Մի ժամանակաշրջան, երբ ցեղասպանությունից մազապուրծ հայ ժողովուրդը օտար ափերում զգաց պատմական հիշողության կորստի և ուծացման վտանգները: Դժվար է պատկերացնել, թե ինչպիսին կլիներ հայ Սփյուռքը, եթե չլիներին հայագիտության նվիրյալները և չստեղծեին հայկական դպրոցներ, վարժարաններ և տպագիր հայկական մամուլ: Հայկազյան համալսարանը բոլոր այս տարիներին հավատարիմ է մնացել հայապահպանության իր առաքելությանը, և համալսարանի տպագրած Հայկազյան Հայագիտական հանդեսը այդ առաքելության ու հայ մտքի արգասիքն է», -նշել է նախարարը և ցանկություն հայտնել Հայկազյան հայագիտական հանդեսի հետագա համարներում ավելի շատ հոդվածներ տեսնել Արցախից ու Արցախի վերաբերյալ՝ ընդգծելով, որ այսօրվա տարածաշրջանային, աշխարհաքաղաքական մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է մեկտեղել հայ գիտական միտքը:

«Երկու համալսարանները, որոնցում կենտրոնացված է գիտական հսկա ներուժ, ինքնության պահպանման մարտահրավերներին դիմակայելու համար պիտի ապավինի հայրենիք-սփյուռք միասնությանը՝ առավել ուժեղ հայրենիք ունենալու ձգտմամբ»,-նշել է ՄԵՀՋ նախարար Լ. Հովհաննիսյանը:

Հայկազյան Հայագիտական հանդեսի պատասխանատու խմբագիր Անդրանիկ Դաքեսյանը ներկայացրել է հանդեսի կառուցվածքը, բաժինները՝ նշելով, որ համարում տեղ են գտել ոչ միայն հայ հեղինակների գործեր, այլ նաև օտարազգի հայագետների աշխատություններ: Նրա համոզմամբ՝ պետք չէ նեղացնել հայագիտության սահմանները և անհրաժեշտ է ուշադրության առանցքում պահել Արցախի, Ջավախքի, Հայաստանի և Սփյուռքի առջև ծառացած արդիական խնդիրները: 38-րդ հատորի շնորհանդեսին Հայագիտական հանդեսի դերն ու նշանակությունը արժևորել են նաև հոդվածագիրներ, ԱրՊՀ դասախոսներ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԸ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Բանասիրական ֆակուլտետի մեծ խորհրդի հերթական նիստի օրակարգային հարցը 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունն էր, որը ներկայացրեց բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Մարգարյանը:

Դեկանը ներկայացրել է ֆակուլտետի գործունեությունն ու նրա կառավարման համակարգը, կրթական գործունեության կազմակերպումը, պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմի գիտական աշխատանքները, միջբուհական, բուհ-դպրոց, բուհ-հասարակություն համագործակցությունը, ապա ինքնավերլուծություն՝ ուժեղ և թույլ կողմերով:

Ներկայացնելով հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները՝ Լ. Մարգարյանն անդրադարձավ նաև թերակատարումներին՝ նկատելով, որ ֆակուլտետի հաջողությունները համատեղ աշխատանքի արդյունք են, իսկ թերացումները շտկելու համար պետք է պատրաստակամություն և կամք դրսևորել. «Ֆակուլտետի ուժեղ կողմերից հատկանշելի են՝ ֆակուլտետի ուսանողության ուսումնագիտական ներուժը, բոլոր ամբիոններում (ոչ լիակազմ) մանկավարժական վարպետությամբ և հմտություններով արհեստավարժ մասնագետների առկայությունը, աշխատունակ, պատրաստակամ ու կարգապահ վարչական աշխատուժը»: Դեկանը շնորհակալություն է հայտնել ֆակուլտետի աշխատակազմին և ուսանողությանը՝ համատեղ կատարած արդյունավետ աշխատանքի համար:

Նիստին ներկա ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը բարձր է գնահատել հաշվետու ժամանակահատվածում բանասիրական ֆակուլտետում կատարված աշխատանքները՝ ընդգծելով ոչ միայն ֆակուլտետի, այլև բուհի առջև ծառացած մարտահրավերները՝ համոզմունք հայտնելով, որ դրանք հաղթահարելի են համատեղ ուժերով:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ԱՄՓՈՓԵԼ ԵՆ ՆԱԽՈՐԴ ՈՒՍՏԱՐՎԱ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի խորհրդի նիստում դեկան, ք.գ.թ., ԱրՊՀ պրոֆեսոր Վոլոդյա Միրզոյանը հանդես է եկել ֆակուլտետի՝ 2017-2018 ուսումնական տարվա գործունեության մասին հաշվետվությամբ:

Վ. Միրզոյանը ներկայացրել է ֆակուլտետի գործունեության ուղղությունները, առանձին ուղղություններով իրականացված աշխատանքներն ու դրանց արդյունավետության մակարդակը, ապա անդրադարձել հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի ուսումնական գործընթացում ի հայտ եկած թերացումներն ու առաջարկել դրանց շտկման եղանակներ:

Շեշտադրելով հատկապես բնագիտական մասնագիտությունների նկատմամբ շրջանավարտների հետաքրքրության նվազումն ու ըստ այդմ՝ առանձին բաժիններում ի հայտ եկած խնդիրները՝ դեկանը հանդես է եկել նաև առաջարկություններով:

«Հանրակրթական դպրոցներում վերանայել բնագիտական առարկաների դրվածքը, հնարավորինս մատչելի դարձնել միասնական քննությունների թեստաշարերը, որոշ մասնագիտությունների գծով ժամանակավորապես ընդունելություն կազմակերպել հարցազրույցի միջոցով կամ առանց քննությունների, օրակարգային դարձնել կրկնակի դիպլոմների հարցը՝ այսպիսով ապագա մասնագետներին ընձեռելով աշխատաշուկայում դրսևորվելու լայն հնարավորություն»,- առաջարկել է պատասխանատուն:

Խորհրդի անդամներն իրենց ելույթներում, բնագիտական ֆակուլտետի 2017-2018 ուսումնական տարվա հաշվետվությունը բավարար գնահատելուց բացի, բարձրաձայնեցին խնդիրներ և անելիքներ, հանդես եկան առաջարկություններով, որոնց շուրջ պարզաբանումներ ներկայացրեց ռեկտոր Արմեն Սարգսյանը: Նա խոստացավ իր լիազորությունների և հնարավորությունների սահմանում լուծում տալ բարձրացված խնդիրներին՝ միաժամանակ առաջարկելով դրանց լուծման ուղիները քննարկել նաև առանձին ամբիոններում:

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՍՊԱ-ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՆԵՐԸ

ԱՐՊՀ և ՊՆ համագործակցության շրջանակներում կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, որոնցից են սպա-հոգեբանների վերապատրաստման դասընթացները: Նոյեմբերի 26-ին ԱՐՊՀ հոգեբանական կենտրոնում մեկնարկել են սպա-հոգեբանների վերապատրաստման հինգօրյա դասընթացները:

Դասընթացների մեկնարկը տրվեց ԱՀ ՊԲ հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ, գեներալ-մայոր Վարդան Բալայանի բանախոսությամբ: Վերջինս իր խոսքում կարևորել է սպա-հոգեբանների դերը ՁՈՒ բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծման և պահպանման գործում, ապա անդրադարձել առանձին պաշտպանական շրջաններում կատարված վերլուծության արդյունքներին:

«Սպա-հոգեբանների մասնագիտական ունակություններով են պայմանավորված բանակում անցանկալի երևույթների և խնդիրների հաղթահարման արդյունավետությունը, ուստի մենք կարևորում ենք որակավորման բարձրացմանն ուղղված ցանկացած միջոցառում»,- նշել է Վ. Բալայանը:

ԱՐՊՀ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը նշել է, որ համալսարանականներն իրենց հերթին անելու են հնարավորը, որպեսզի հնգօրյա ժամանակահատվածում առավելագույն գիտելիքներ և հմտություններ փոխանցեն հավաքի մասնակիցներին: Իսկ թեմաներն առավելապես առնչվում էին անհատական և խմբային հոգեբանական աշխատանքի առանձնահատկություններին, զինվորական կոլեկտիվներում սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունների անցկացման մեթոդիկային՝ ընդգրկելով ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքներ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ «ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ

ԱՐՊՀ լրագրության բաժնի նախաձեռնությամբ հեռուստատեսության միջազգային օրվա առթիվ «Հեռուստատեսության զարգացման հեռանկարները» թեմայով հրավիրվել էր կլոր սեղան, որին ներկա էր նաև Արցախի հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար կազմը:

Միջոցառման նախաձեռնող, գրականության և լրագրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Շուշան Խաչատրյանը, կարևորելով հեռուստատեսության դերը հանրային կարծիքի ձևավորման գործում, գտնում է, որ ժամանակն է այն դարձնել շահագրգիռ քննարկումների առարկա: Դառնալով բուհ-գործատու համագործակցությանը՝ պատասխանատուն նշել է, որ նպատակ ունեն քննարկման արդյունքում վերհանելու խոչընդոտող գործոնները, նախանշելու գործակցության զարգացման հեռանկարներն ու հնարավոր եղանակները.

«Աշխարհի հեղինակավոր հեռուստաընկերությունների կադրային քաղաքականությունը ձևավորվում է բուհ-գործատու կապի ամրապնդմամբ, որի արդյունքում երկուստեք ստեղծվում են նպաստավոր պայմաններ մի կողմից՝ առաջարկելու, մյուս կողմից՝ ընտրելու»,- նշել է Շ. Խաչատրյանը:

ԱՀ գործադիր տնօրեն Մերի Դավթյանը նկատում է, որ երկար ժամանակ որոնել է հանդիպում-քննարկման առիթ և, երբ այն արդեն իրականություն է, պատրաստ է քննարկելու, թե ինչ է ակնկալում հեռուստատեսությունը և այդ համատեքստում ինչ կարող է պահանջվել բաժնից:

Անդրադառնալով հեռուստատեսության որակական և քանակական ցուցանիշներին, ինչպես նաև դրանց հանրային ընկալումներին՝ Մ. Դավթյանը չխուսափեց խոստովանել, որ հեռուստա-

էկրանը ցանկալիի չափ դիտարժան չէ, բայց և ընդգծեց, որ այն պայմանավորված չէ բացառապես հեռուստաընկերության աշխատակազմով:

Ինչ վերաբերում է ուսանողների հարցերին և առաջարկներին՝ հեռուստատեսության ղեկավարությունը դեմ չէ նոր դեմքերի, միայն թե «երազելը» նախապայման է: Ահա այս տրամաբանությամբ և տրամադրվածությամբ բաժնի 2-րդ կուրսի ուսանող Շողեր Սարգսյանը ներկայացրեց «Իմ երազանքի հեռուստատեսությունը» անիմացիան, որի արդյունքում հեռուստառադիոընկերության ղեկավարության կողմից առաջարկ ստացավ իր երազանքները կյանքի կոչելու հեռուստատեսության ստեղծագործական թիմում: Հետաքրքիր գաղափարի համար նույն առաջարկը ստացավ նաև 4-րդ կուրսի ուսանողուհի Վալենտինա Գրիգորյանը:

Լրագրության բաժնի դասախոսներն ու ուսանողները կիսեցին իրենց կարծիք-մտահոգությունները՝ միաժամանակ առաջարկելով համատեղ աշխատանքով նույն հայտարարի բերել առաջարկն ու պահանջարկը:

1 ➥

«Բոլոր երկրներում ուսանողությունը եղել է ցանկացած բարեփոխման և դրական փոփոխությունների շարժիչ ուժը: Համոզված եմ, որ այդ ներուժը կա նաև ձեր մեջ, և հակված եք դրական փոփոխություններին նպաստելու: Դուք ձեր կյանքի ամենահետաքրքիր ու լուսավոր ժամանակահատվածն եք ապրում: Ողջունում եմ ձեր ակտիվությունը, որը դրսևորվում է նաև արտահամալսարանական ձեռնարկումներում»,-դիմելով ուսանողությանը՝ նշել է Գ. Մարտիրոսյանը:

Պետնախարարը համառոտ ներկայացրել է ԱՀ տնտեսության ներկա վիճակը, գյուղատնտեսության, էներգետիկայի, բնակարանաշինության ուղղություններով իրականացվող ծրագրերը, արձանագրված առաջընթացը, զարգացման հեռանկարները:

Շոշափելի հաջողություններից պետնախարարն առանձնացրել է հատկապես էներգետիկայի ոլորտը: «Ուզում եմ հատուկ ընդգծել, որ Արցախում զարգացնում ենք վերականգնվող էներգիան, կամ, այսպես կոչված, կանաչ էներգիան: Այդ առումով մեր հանրապետությունը աշխարհում առաջատարներից է»,- նշել է Գ. Մարտիրոսյանը՝ մանրամասնելով, որ Արցախն էներգետիկ արտադրանքի առումով ինքնաբավությունից արդեն անցում է կատարել արտահանողի կարգավիճակի: Նա ուսանողներին տեղեկացրել է նաև, որ հիդրոէներգետիկ ոլորտում Արցախը թերևս մեծ ներուժ ունի, և զուգահեռաբար շարունակվելու է արևային էներգետիկայի զարգացումը:

Հանդիպմանը Գ. Մարտիրոսյանը պատասխանել է ուսանողներին հուզող հարցերին, որոնք վերաբերում էին տարբեր խնդիրների՝ ԱՐՊՀ հանրակացարանի հին մասի վերանորոգմանը, երիտասարդական նորարարական բիզնես ծրագրերի և արտերկրում ուսումնառության պետական խրախուսմանը, ուսանողների ակադեմիական փոխանակությանը, ԱՐՊՀ ամառային ճամբարն ու դաշտային փորձուսուցումը կազմակերպելու նպատակով համալսարանական տարածք ունենալուն, բնագիտական ուղղությամբ բուհի դիմորդների՝ տարեցտարի նվազման պատճառով տվյալ մասնագիտություններն ավելի գրավիչ դարձնելուն ուղղված քայլեր ձեռնարկելուն և այլ հարցերի:

Հանդիպման ավարտին ԱՐՊՀ ռեկտորը, կարևորելով նման հանդիպումների նշանակությունը, շնորհակալություն է հայտնել ԱՀ պետնախարարին՝ ընդունելության և ուսանողության առաջարկին ընդառաջելու համար:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Նոյեմբերի 9-ին գումարված ԱՐՊՀ գիտական խորհրդի նիստում հաստատվել են նոր կազմավորված բաժինների կանոնադրություններ, լսվել հաշվետվություններ:

Հանդես գալով առաջին ընթացիկ ստուգումների մասին հաշվետվությամբ՝ ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի պետ Գոհար Գասպարյանն, ըստ ֆակուլտետների և բաժինների, ներկայացրել է վիճակագրական տվյալներ ստուգումների արդյունքներից: Նա նշել է, որ վերլուծության արդյունքները կտրամադրվեն պատասխանատուներին՝ տեղերում քննարկելու և նշված թերությունները վերացնելու համար: Գիտխորհուրդը լսել և ի գիտություն է ընդունել բնագիտական ֆակուլտետի ամբիոնների 2017-2018 ուսումնական տարվա հաշվետվությունները, որոնք ուղեկցվել են հարց ու պատասխանով: Ամփոփելով հաշվետվությունները՝ ռեկտոր Արմեն Սարգսյանը նկատեց, որ ինչպես դեկանների, այնպես էլ ամբիոնների վարիչների ներկայացումներում բացակայում են խորքային վերլուծությունները, որոնց արդյունքում տեսանելի պիտի դառնային առկա թերությունները ու վերացման եղանակները: Նախքան գիտխորհրդի քվեարկությանը կներկայացվեր նորաստեղծ կամ վերակազմավորված բաժինների կանոնադրությունները, Ա. Սարգսյանը հիմնավորեց դրանց անհրաժեշտությունն ու կարևորությունը ուսումնառության գործընթացը պատշաճ կազմակերպելու տեսանկյունից: Քվեարկության արդյունքում ընդունվեցին կանոնադրությունները:

ԱՐՊՀ ռեկտորի ներկայացմամբ գիտխորհուրդը հաստատեց նաև ԱՐՊՀ բակալավրիատի (առկա և հեռակա ուսուցման համակարգի) 2019-2020 ուսումնական տարվա մասնագիտությունների ցանկը՝ ներկայացնելու լիազոր մարմնին:

«Ասել, թե լիազոր մարմնին ներկայացվում է վերջնական օպտիմալացված մասնագիտությունների ցանկ, ճիշտ չէր լինի: Սակայն, ի տարբերություն ընթացիկ տարվա, հաջորդ ուսումնականում կանխատեսվում է շրջանավարտների քանակական աճ, ինչը, կարծում եմ՝ որոշակիորեն կարդարացնի ցանկով առաջարկվող մասնագիտությունների բազմազանությունը»,- նշել է Ա. Սարգսյանը:

Գիտխորհուրդը միաձայն կողմ է քվեարկել նաև ԱՐՊՀ նախկին ռեկտոր Մանուշ Մինասյանին ԱՐՊՀ «Ոսկե մեդալ»-ով պարգևատրելու մասին առաջարկին: Այլ հարցերում քննարկվել և հաստատվել են բանասիրական ֆակուլտետի դասախոսներ Լուսինե Պետրոսյանի, Արմեն Սարգսյանի, Սիրվարդ Ստեփանյանի, Նարինե Ամիրյանի և մանկավարժության ու սպորտի ֆակուլտետի դասախոս Արմինե Աբալյանի ուսումնամեթոդական ձեռնարկները, ուսումնասիրությունները տպագրության երաշխավորելու հարցը:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

Ուսանողների միջազգային օրն առիթ է՝ ոչ միայն նշանավորելու օրվա խորհուրդը, այլև խրախուսելու տարբեր ոլորտներում հաջողություններ արձանագրած ուսանողներին, գնահատելու նրանց ձեռքբերումները: Նոյեմբերի 16-ին ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանի հրամանով պարգևատրվել են մի խումբ ուսանողներ:

Պատվոգրերով, գովասանագրերով, շնորհակալագրերով, գրքերով և դրամական պարգևներով խրախուսվել են Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպված մրցույթներում «Լավագույն բանաստեղծություն», «Լավագույն գեղանկար», «Լավագույն լուսանկար», «Լավագույն թղթակից», «Շախմատ», «Սեղանի թենիս», «Ինտելեկտուալ մրցույթ» անվանակարգերում հաղթող ճանաչված, ուսումնական, գիտական, հասարակական ակտիվություն ցուցաբերած, մարզական նշանակալի ձեռքբերումներով առանձնացած, ինչպես նաև 2017-2018 ուսումնական տարում, ըստ մասնագիտությունների, բարձր ուսումնական առաջադիմություն և պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողները:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ռեկտորատի և պրոֆեսորադասախոսական կազմի անունից շնորհավորելով ուսանողներին տոնի կապակցությամբ, իր խոսքում կարևորել է պետականաշինության կայացման և զարգացման գործում կայուն արժեհամակարգ ունեցող ուսանողության դերը:

«Արցախի պետական համալսարանը, ինչպես աշխարհի մյուս բուհերը, կանգնած է մի շարք մարտահրավերների առջև՝ կապված աշխարհաքաղաքական իրավիճակի, ժամանակաշրջանի ներկայացրած պահանջների հետ, որոնք կարող են լուծվել ոչ միայն պրոֆեսորադասախոսական կազմի, այլև, առաջին հերթին, ուսանողության օժանդակությամբ»,- նշել է ռեկտորը:

ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը շնորհավորանքի և բարեմաղթանքի խոսքում կարևորել է ուսանողի գործունեությունը, հորդորել մշտապես ձգտել ավելիին. «Մեր երկիրը որդեգրել և իրականացնում է քաղաքականություն, որի ուշադրության առանցքում է երիտասարդությունը, հատկապես նրա սերուցքային մասը՝ ուսանողությունը: Մենք հպարտ ենք, որ մեր երկրի ապագայի վերաբերյալ հույսերը կապված են մայր բուհի, Արցախի ապագայի բեռն իր ուսերին վերցնող ուսանողության հետ»:

ԿԱՅԱՑԵԼ Է «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ՄՐՑՈՒՅԹԻ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՓՈՒԼԸ

Կայացել է «Տարվա լավագույն ուսանող» մրցույթի ներբուհական փուլը:Հաղթող է ճանաչվել տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսներ մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Դիանա Խաչատրյանը:

ԱրՊՀ ռեկտորի հրամանով հաստատված մրցութային հանձնաժողովի նիստում ուսումնասիրվել, քննարկվել և թեկնածուների հետ կազմակերպվել են հարցազրույցներ:

Հաշվի առնելով մրցույթի անցկացման կարգի պահանջները՝ ուսման առաջադիմությունը, մասնագիտական ձեռքբերումները և հասարակական ակտիվությունը՝ մրցութային հանձնաժողովը առանձնացրել է չորս թեկնածուների՝ Դիանա Լևոնի Խաչատրյանին, Անժելիկա Սասունի Դավիդյանին, Անահիտ Մանվելի Մխիթարյանին, Արփինե Վիտյայի Յարամիշյանին, ովքեր աչքի են ընկել նշված բոլոր ուղղություններով: Դիանա Լևոնի Խաչատրյանը ուսումնագիտական ակտիվություն է ցուցաբերել նաև՝ միջազգային պարբերականում հոդված տպագրելով, ինչն էլ արձանագրվել է որպես առավելություն: Հանձնաժողովի քննարկման արդյունքում ԱրՊՀ լավագույն ուսանող է ճանաչվել Դիանա Լևոնի Խաչատրյանը, ով կմասնակցի մրցույթի 2-րդ՝ հանրապետական փուլին:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՖԻԶԻԿԱՅԻ ԲԱԺՆՈՒՄ

ԱրՊՀ ֆիզիկայի բաժնում մեկ շաբաթյա տևողությամբ դասախոսություններով հանդես է եկել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ֆիզիկայի ամբիոնի վարիչ, ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Խաչատրյանը:

ԱրՊՀ ֆիզիկայի ամբիոնի վարիչ Ալբերտ Ալեքսանյանը նշել է, որ երկու համալսարանների ղեկավարության միջև ձեռք բերված պայմանավորվածության արդյունքում առանձին մասնագիտությունների գծով պարբերաբար հրավիրվում են մասնագետներ, ովքեր մասնագիտության արդիական խնդիրների վերաբերյալ հանդես են գալիս դասախոսություններով:

«Այս ընթացքում բաժնում առկա մասնագետների սղության խնդիրը լուծում ենք գործընկեր բուհերից մասնագետներ հրավիրելով, որոնք հանդես են գալիս նախապես հստակեցված թեմաներով, այս անգամ՝ նանոէլեկտրոնիկայի ներածություն»,- ասում է Ա. Ալեքսանյանն ու նշում, որ նույն մասնագետը հրավիրվելու է նաև երկրորդ կիսամյակում:

ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՏԱԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹԻ

Նոյեմբերի 16-18-ը Հայկական Կարմիր խաչի միջազգային կոմիտեի նախաձեռնությամբ Աղվերանում կայացել է Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) վերաբերյալ դատախաղ-մրցույթ, որին մասնակցել են հայաստանյան բուհերի և ԱրՊՀ իրավագիտության բաժնի ուսանողներից բաղկացած թիմեր: ԱրՊՀ թիմը դատախաղ-մրցույթում զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը՝ զիջելով միայն ԵՊՀ թիմին:

Դատախաղ-մրցույթի նպատակն է տեսական դասընթացների և գործնական առաջադրանքների միջոցով խորացնել Միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ ապագա իրավաբանների գիտելիքները:

ԱրՊՀ թիմի կազմում էին իրավագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանողներ Նոննա Սաղյանը, Ալիսա Սարգսյանը և իրավագիտության մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի Աննա Գասպարյանը: ԱրՊՀ իրավունքի ամբիոնի վարիչ Ռիտա Առուստամյանը նշում է, որ ամբիոնը շուրջ 20 տարի է՝ համագործակցում է ՀԿԽՄԿ Արցախի ներկայացուցչության հետ:

«Հպարտ եմ, որ մեր ուսանողները 9 ուժեղ թիմերի հետ մրցակցության արդյունքում ցուցաբերել են գիտելիքների բարձր իմացություն և գործնականում չունենալով փորձ՝ կարողացել են ճիշտ և գրագետ ներկայացնել դատավարության ընթացքը՝ բարձր պահելով նաև Արցախի պետական համալսարանի անունը»:

Դատախաղ-մրցույթում ԱրՊՀ ուսանողուհի Նոննա Սաղյանը, ով նաև ճանաչվել է դատախաղի «Լավագույն հռետոր», կարևորելով միջազգային նման մրցույթներին ԱրՊՀ մասնակցությունը, նշել է. «Մրցույթը վերաբերում էր միջազգային մարդասիրական իրավունքին, որը կիրառվում է զինված հակամարտությունների գոտում: Իսկ մեր մասնակցությունը կարևորվում է նաև նրանով, որ մենք գտնվում ենք կոնֆլիկտի գոտում: Նման միջոցառումներին մասնակցելով՝ նաև ուսումնասիրում ենք միջազգային իրավական փաստաթղթերը՝ հարստացնելով մեր իմացությունների շրջանակը, ինչպես նաև տեսական գիտելիքների յուրացմամբ կարողանում ենք այն կիրառել գործնականում»:

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՊՀ-ՈՒՄ ԷՐ

ԱՐՊՀ իրավունքի ամբիոնի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի միջև ստորագրված հուշագրի շրջանակում նոյեմբերի 5-ին Արցախի մայր բուհ է այցելել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը՝ ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ի.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Ղազինյանի գլխավորությամբ:

Այցի նպատակը մասնագիտական օժանդակություն ցուցաբերելն է Արցախի մայր բուհին: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը մեկ շաբաթ տևողությամբ դասախոսություն է վարել ԱՐՊՀ իրավագիտություն մասնագիտությամբ սովորող ուսանողների համար՝ իրավաբանի մասնագիտական հմտություններ, մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշները ՀՀ քրեական դատավարությունում, կատարողական վարույթը ՀՀ-ում, աշխատանքային վեճեր դասընթացներից: Պատվիրակության կազմում էին ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Սամվել Դիլբանդյանը, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Արթուր Վաղարշյանը, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Դավիթ Ավետիսյանը, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վահագն Գրիգորյանը, քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Տիգրան Խաչիկյանը:

Պատվիրակությանը նախ ընդունել է ԱՐՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը՝ շնորհակալություն հայտնելով Գագիկ Ղազինյանին՝ իր գործունեության ընթացքում Արցախը մշտապես ուշադրության առանցքում պահելու և ԱՐՊՀ իրավունքի ամբիոնին ուսումնագիտական աջակցություն ցուցաբերելու համար: Ռեկտորը կարևորել է համագործակցության շրջանակում ԵՊՀ կողմից ԱՐՊՀ-ում իրականացվող ծրագրերը և ընդգծել դրանց շարունակականությունն ապահովելու անհրաժեշտությունը: Հուշագրի համաձայն համագործակցությունը ենթադրում է գործընկեր բուհի կողմից օժանդակություն ԱՐՊՀ-ին՝ մասնագետների պատրաստման գործում, համատեղ միջոցառումների իրականացում, ուսումնաօժանդակ նյութերի տրամադրում, ԵՊՀ մասնագետների կողմից ԱՐՊՀ-ում դասընթացների անցկացում, ԱՐՊՀ դասախոսական կազմի վերապատրաստում, ասպիրանտական եւ պրոֆեսորադասախոսական կազմի համատեղ գիտաժողովների կազմակերպում, միջազգային ծրագրերում ԱՐՊՀ-ի ներկայացուցիչների ներգրավում:

Հանդիպման ընթացքում Գագիկ Ղազինյանն իր պատրաստակամությունն է հայտնել հուշագրի դրույթներն իրականացնելու գործում՝ նշելով. «Մենք առաջնորդվում ենք ԱՐՊՀ և ԵՊՀ միջև կնքված հուշագրի դրույթներով, որը նախատեսում է բազմաբովանդակ օժանդակություն ԱՐՊՀ իրավունքի ամբիոնին՝ մասնագիտության կայացման հարցում, նաև նմանատիպ այցելություններ, մեր լավագույն մասնագետների կողմից դասախոսությունների կազմակերպում, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի միջոցով կադրերի պատրաստում, տարբեր միջոցառումներում ԱՐՊՀ-ի ներգրավում: Մենք ԱՐՊՀ իրավունքի ամբիոնը դիտարկում ենք որպես ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամբիոններից մեկը: Ցանկացած միջոցառում, որն իրականացնում է մեր ֆակուլտետը, պարտադիր իրավեր ստանում է նաև ԱՐՊՀ իրավունքի ամբիոնը: Նպատակը մեկն է՝ որպեսզի այս մասնագիտությունը զարգանա Արցախում: Արցախի Հանրապետության համար կարևոր նշանակություն ունի լավ իրավաբանների առկայությունը՝ պայմանավորված երկրի ներսում առաջացող իրավահարաբերությունների կարգավորման մեջ նրանց դերակատարության անհրաժեշտությամբ»:

ԱՐՊՀ իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ. Ռիտա Առուստամյանը, խոսելով համագործակցության հուշագրի մասին, նշել է, որ փուլ առ փուլ կիրառվում են հուշագրի կետերը, և արդեն ավանդույթ են դարձել ԵՊՀ լավագույն մասնագետների այցելություններն Արցախ ու ԱՐՊՀ իրավունքի ամբիոնում դասախոսություններով հանդես գալը:

ԵՊՀ-ից ժամանած դասախոսական խումբը անց է կացրել նաև գիտական սեմինարներ դասախոսների համար:

ԱՐՊՀ-ՈՒՄ ՆՇԵԼ ԵՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐԸ

Նոյեմբերի 22-ին ԱՐՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Նարինե Ավանեսյանի նախաձեռնությամբ կազմակերպված ուսանողական գիտական ընթերցումներով նշանավորվեց բանկային աշխատողի օրը, որին հրավիրված էին նաև ներկայացուցիչներ բանկային և ոլորտին առնչվող այլ համակարգերից:

«Ոլորտում աշխատելը պահանջում է բարձր պրոֆեսիոնալիզմ, կատարելագործված գիտելիքներ և հմտություններ, ուստի մաղթում եմ, որ ձեր աշխատանքում ավելի շատ կայունություն լինի, որը հիմք կտա կայուն հիերարայի արագ աճի»,- ասել է նա:

Բանկային համակարգի աշխատողի օրը պատահական չէ ընտրվել. 1993 թվականի նույն օրը խորհրդային ռուբլու փոխարեն Հայաստանում և Արցախում շրջանառության մեջ է դրվել ազգային արժույթը՝ հայկական դրամը, որի կապակցությամբ էլ ուսանողներն անդրադարձել են չճանաչված պետությունների, այդ թվում՝ ԱՀ տարածքում բանկային գործունեության կայացման և զարգացման առանձնահատկություններին, ֆինանսական կայունության վրա ազդող գործոններին, պլաստիկ քարտերի ձևավորման ՀՀ շուկային և վիրտուալ արժույթին:

ԲՈՒՀ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԵՆ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Նոյեմբերի 8-ին ԱՐՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսներ մասնագիտության երրորդ կուրսի ուսանողները Ստեփանակերտի Վիտալի Զհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցում հանդես են եկել խնայողություններին նվիրված ճանաչողական ընթերցումներով:

«Վ. Զհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի հետ մեր համագործակցությունը տարիների պատմություն ունի, և փորձը ցույց է տալիս, որ բուհ-դպրոց համագործակցությունը երկուստեք առողջ պտուղներ է տալիս, որոնցից լավագույնը ճանաչողական ընթերցումներն են»,- նշել է Ն. Ավանեսյանը:

Նատալիա Առաքելյանը առաջին անգամ չէ հ. 11 ավագ դպրոցում: Այն իր հարազատ դպրոցն է, միայն թե կարգավիճակն է փոխվել. «Երեկ՝ աշակերտ, այսօր արդեն՝ ուսուցիչների կրտսեր գործընկեր:

«Հարազատ դպրոցում դասախոսությամբ հանդես գալը պարտավորեցնող է, բայց և՝ հաճելի:Այսպիսի հանդիպումները անհրաժեշտ են և՛ աշակերտներին, և՛ ուսանողներին»,- ասել է ուսանողուհի Նատալիա Առաքելյանը, ով նույն դպրոցի շրջանավարտն է:

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԼԵԶՎԱԲԱՆ ԱՇՈՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Ակադեմիկոս Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնում լեզվաբանների հոբելյանները տարբեր միջոցառումներով նշանավորելը ավանդույթ է դարձել: Նոյեմբերի 28-ին ամբիոնի դոցենտ Սիլվա Մինասյանի նախաձեռնությամբ նշվել է լեզվաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, մանկավարժ Աշոտ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակը:

Ամբիոնի դասախոսները գիտական ելույթներով ներկայացրել են Աշոտ Աբրահամյան գիտնականին, մանկավարժին, քաղաքացուն, արժևորել նրա ներդրումը հայերենագիտության բնագավառում, մագիստրանտները՝ կենսագրական ուղին:

«Առաջնորդվել հայ մեծերի մեծարժեք գրքերով, քիչ է: Պետք է պայմաններ ստեղծել՝ խորապես ուսումնասիրելու և հանրայնացնելու նրանց կյանքն ու գործը, նրանց ներդրումը լեզվաբանության մեջ»,- նշել է Ս. Մինասյանը:

ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 110-ԱՄՅԱԿԻՆ

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ նոյեմբերի 20-ին կազմակերպված գիտամանկավարժական ընթերցումները նվիրված էին Վազգեն Առաջին կաթողիկոսի ծննդյան 110-ամյակին:

Միջոցառմանը հրավիրված էին ֆակուլտետի ղեկավարությունը, դասախոսական կազմը, ուսանողներ, ՀԱԵ Արցախի թեմի ներկայացուցիչներ: Ողջունելով հյուրերին՝ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Էլլադա Բաղդասարյանը ներկայացրել է կաթողիկոսի գործունեությունը, առանձնապես Արցախին և Արցախի ժողովրդին առնչվող դրվագները:

«Վազգեն Առաջին կաթողիկոսի ավանդը հայ եկեղեցաշինության և հայ հոգևոր դասի համախմբման գործում շատ մեծ է եղել: Անուրանալի է ազգային և հոգևոր արժեքների պահպանության, զարգացման գործում դրսևորած նրա նվիրումն ու մատուցած բացառիկ ծառայությունները: Այսօր բոլորս ականատեսն ու մասնակիցն ենք ուրախալի երևույթի, որը ճանապարհ է բացում դեպի հավատքի սրբավայր՝ դեպի եկեղեցի»,- ասել է միջոցառման նախաձեռնող է. Բաղդասարյանը:

ԱրՊՀ ՊՐՈՌԵԿՏՈՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՌԴ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ

ԱրՊՀ գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր, պ.գ.դ.,պրոֆեսոր Վալերի Ավանեսյանը հոկտեմբերի 29-ից 30-ը մասնակցել է ՌԴ Ի.Ս.Տուրգենևի անվան Օրյոլի պետական համալսարանում կայացած միջազգային գիտաժողովին:

Արդեն երկրորդ տարին է, ինչ Օրյոլի պետական համալսարանի հետ համագործակցության շրջանակում ԱրՊՀ-ն հրավեր է ստանում՝ մասնակցելու գիտական միջոցառման, և կազմկոմիտեի կողմից արժանանում առանձնահատուկ ուշադրության:

«Եվրոպայի և Ռուսաստանի սոցիալ-մշակութային կյանքը 19-րդ դարի ինտելեկտուալների աչքերով» խորագրով գիտաժողովին մասնակցած ԱրՊՀ պատվիրակ Վ. Ավանեսյանը հանդես է եկել «1848 թվականի Ֆրանսիան և Լու էժեն Կավենյակը Ն. Գ. Չերնիշևսկու գնահատմամբ» զեկուցմամբ՝ միաժամանակ հանդիսանալով «Ռուսաստանի սոցիալ-մշակութային կյանքը՝ իբրև 19-րդ դարի ինտելեկտուալ երկխոսության օբյեկտ» մասնախմբի մոդերատորը:

Վ. Ավանեսյանը կարևորել է միջազգային գիտաժողովներին մասնակցությունը մի կողմից գիտական շփումների տեսանկյունից, մյուս կողմից՝ արտասահմանյան առաջատար գիտակրթական հաստատությունների հետ համագործակցության հեռանկարների առումով:

«Նմանատիպ շփումները հնարավորություն են ընձեռում հաստատելու նոր ծանոթություններ, որի արդյունքում սկիզբ է դրվում անհատական, ապա և՝ միջբուհական համագործակցության»,- ասել է պրոռեկտոր:

ԱրՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

ԱրՊՀ հայ գրականության և լրագրության ամբիոնի մի խումբ դասախոսներ նոյեմբերի 2-ից 4-ը Վանաձորի պետական համալսարանում մասնակցել են գրականագետ Մելս Սանթոյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտաժողովին:

ԱրՊՀ պրոֆեսոր Սոկրատ Խանյանը գիտաժողովի բացման խոսքում արժևորել է Մ. Սանթոյանի վաստակն ու գրական ուղին, Արցախյան գոյապայքարի տարիներին նրա ներդրումը կադրերի պատրաստման գործում, երբ վերջինս իր ընկերների հետ կազմակերպում էր Արցախից Վանաձոր տեղափոխված ուսանողների ուսումնական գործընթացը: Պրոֆեսոր Ս. Խանյանը, որ անվանի գրականագետի հետ աշխատել և մտերիմ է եղել, դրվագներ ներկայացրել իրեն ուղղված Սանթոյանի նամակներից:

«Հոբելյանական տարելիցներին նվիրված գիտաժողովի կազմակերպումը ոչ միայն հարգանքի տուրք է վաստակաշատ գրականագետի հիշատակին, այլև արդի գրականագիտության հիմնախնդիրների վերհանման հնարավորություն: Ասել է թե՝ հետմահու նրանք շարունակում են հովանավորել գրականությունն ու գրականագիտությամբ զբաղվողներին»,- ասել է Ս. Խանյանը:

Գիտաժողովի ընթացքում գրականագիտական ուսումնասիրություններով հանդես են եկել նաև գրականության և լրագրության ամբիոնի դոցենտներ Սիրուն Բաղդասարյանը, Զինաիդա Բալայանը, Սիլվա Խաչատրյանը և մագիստրանտ Անահիտ Հայրապետյանը:

ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀՊՏՀ-ՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ «CROSSKILL» ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻՆ

Արցախի պետական համալսարանի ուսանողները նոյեմբերի 24-25-ը մասնակցել են ՀՊՏՀ-ում ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ տեղի ունեցած «Crosskill» («Հմտությունների խաչմերուկ») միջբուհական ուսանողական աշխատաժողովին:

Աշխատաժողովին մասնակցել են ՀՀ պետական և ոչ պետական 10 բուհերի 50 ուսանողներ, այդ թվում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական, Երևանի պետական, Հայկական պետական մանկավարժական, ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային, Հայաստանում Ֆրանսիական, Արցախի պետական համալսարաններից: Աշխատաժողովին բացման խոսքով հանդես է եկել ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը, մասնակիցներին ողջունել ու աշխատանքներին հաջող ընթացք են մաղթել ՀՊՏՀ ՈՒԽ նախագահ Հովհաննես Հարությունյանը և ՈՒԽ ուսումնագիտական հանձնաժողովի նախագահ Սոնա Ոսկանյանը: Աշխատաժողովը հագեցած է եղել գործնական աշխատանքներով, խաղերով, քննարկումներով, ուշագրավ բանախոսություններով: Վերջում մասնակիցներին տրվել են հավաստագրեր:

ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Արման Հայրապետյանը կարևորում է նման միջոցառումների նշանակությունը՝ միջբուհական կապերը սերտացնելու, նոր ծանոթություններ և շփումներ հաստատելու առումով. «ՀՊՏՀ-ի կողմից կազմակերպված աշխատաժողովը մեզ հնարավորություն ընձեռեց շփվելու հայաստանյան պետական և ոչ պետական բուհերի ուսանողության հետ, ձեռք բերել նոր ընկերներ, գիտելիքներ և հմտություններ, այն օգնեց մեզ առօրեական խնդիրներին տալ արդյունավետ լուծումներ: Անձամբ ինձ, որը շատ սկզբունքային է, սովորեցրեց լինել լավագույնը: Կուզենայի՝ հաճախակի կազմակերպվեին նման միջոցառումներ, և ավելի մեծ թվով ուսանողներ հնարավորություն ունենային մասնակցել»:

ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՇԱՐՔ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆՈՒՄ

EPNK ծրագրի շրջանակում Արցախում գործող «Բաց հասարակություն» հասարակական կազմակերպությունը բրիտանական International Alert ոչ կառավարական կազմակերպության աջակցությամբ ԱրՊՀ լրագրության բաժնում իրականացնում է մուլտիմեդիա դասընթացների շարք:

Հոկտեմբերից մեկնարկած դասընթացների շրջանակներում նախատեսվում է մասնակիցներին ծանոթացնել մեդիագրագիտության հիմնական սկզբունքներին, մուլտիմեդիայի ստեղծմանն ու տարածմանը, անվտանգության և տեղեկությունների ստուգման կանոններին՝ կիրառելով մուլտիմեդիա ժամանակակից գործիքներ:

«Հաշվի առնելով Արցախի առանձնահատկությունը՝ նպատակ ունենք ապագա լրագրողներին ծանոթացնել ժամանակակից մեդիայի հետ աշխատելու արդյունավետ միջոցներին և եղանակներին՝ միաժամանակ նրանց մասնագիտական զարգացման համար ստեղծելով հավասար հնարավորություններ»,- նպատակը մանրամասնում է ծրագրի համակարգող Անահիտ Դանիելյանը:

Դասընթացները վարում են Երևանում գործող «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»-ի մասնագետները: Առաջին դասընթացը վարում էր «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»-ի մեդիագրագիտության ծրագրի ղեկավար Լուսինե Գրիգորյանը՝ համանուն թեմայով: Նույն կենտրոնի պրոդյուսեր Արմեն Սարգսյանը երկրորդ դասընթացի շրջանակներում ուսանողներին ներկայացրել է առցանց գործիքների միջոցով անհատական և ընդհանուր հարթակներում մեդիայի ասելիքը գրագետ տեղ հասցնելու եղանակները: Թեմայի շրջանակներում ուսանողներին հանձնարարվել են խմբային և անհատական գործնական աշխատանքներ, որոնք հրապարակվել են Wordpress հարթակում: